Tornberg հետեւեալ տիտղոսով՝ Ibn-el-Athiri Chronicon quod perfectissimum inscribitur, Vol. 1—12 und 13, 14 Indices. Lugduni Bat. 1867—74. Հաւանական է, որ Իբն-էլ-Աթիր իւր ընդարձակ գործը ի կատար ածելու համար շատ անգամ դիմել է պատրաստի արաբացի աղբիւրներին. այսպէս Հայաստանի պատմութիւնը նա բառացի շատ տեղեր քաղել է Բելադորիից եւ մասամբ եւս Տաբարիից. այս հատուածները ես հարկաւ աւելորդ համարեցի կրկնել, առաջ բերելով մեր հեղինակի նոր կամ տարբեր վկայութիւնները:

Արտաշիր որդի Պապակի արշաւեց Ջաբալի, Ատրպատականի, Հայաստանի եւ Մոսուլի վերայ եւ տիրեց այս երկրներին զէնքի զօրութեամբ:

Ափխազք, Բանաջարք, Բալանջարք եւ Ալանք միասին գումարուեցան՝ Անուշիրվանի երկրները ասպատակելու համար եւ արշաւեցին Հայաստան՝ աւարառութեան նպատակով: Ճանապարհը առ անց խոչնդոտի էր, որովհետեւ Անուշիրվան սպասեց, մինչեւ նոքա երկրի խորքը մտան. այն ժամանակ նա ուղարկեց նոցա դէմ մի քանի զօրագնդեր, որոնք ճակատեցան նոցա հետ եւ կոտորեցին նոցա, բացի 10.000 գերեալներից, որոնց նա բնակեցրեց Ատրպատականում:

Պերոզ արքայ կառուցել էր Սուլի եւ Ալանաց կողմերում շինութիւն՝ իւր հողերը նորանով պաշտպանելու համար. իսկ նորա որդի Կաւատ բազմացրեց շինութիւնների թիւը: Անուշիրվան կառուցեց Սուլ եւ Ջորջան գաւառներում բազմաթիւ շինութիւններ եւ ամրոցներ՝ իւր բոլոր հողերը նոցա միջոցաւ պաշտպանելու համար: Սիջիուր (?) խաքանը արշաւեց նորա երկրի վերայ. Թուրքերը հզօր էին, Խազարք, Ափխազք եւ Բալանջարք հարուստ էին եւ կը հնազանդէին